

ելած՝ եթէ ոչ գլուխ գործոց մը, գոնէ անոր մօտ գործ մը չունինք դժբախտաբար. այլ՝ խորհրդածութեամբ գրուած քանի մը յիշատակարաններ միայն, նոյնպէս՝ իր «դասատան» կամ «դպրատան» կեանքն ալ շատ ծանօթ չէ մեզի:

Իր «դպրատան» գոյութիւնը, սակայն, անժխտելի է, ոչ անոր համար որ իբր Պատրիարք կրցած է դպրոցի մը կեանք տալ՝ Ղուկաս վարդապետի պէս լեզուագէտ եւ գիտուն ուսուցչի մը հետ, այլ անոր համար որ այդ դպրոցը՝ Թուրքիոյ Հայոց ԺԸ դարու մտաւորական կեանքին վրայ հանգրուան մ'է՛:

Տպագրութեան կարելի եղածին չափ բարգաւաճումը, եւրոպական (լատին) գրականութեան հայացած ձոխ մթերքը, կրօնական — փիլիսո-

1 Կոլտ յատկապէս կը յիշատակէ իր դասատան աշխատաւորներու կարգին մէջ «գՏարազատն մեր ի քրիստոս գԳուար Դպրն Սեբուրոցի, որ բազում երախտիս ունի ի վերայ մանկանց մերոց համբակաց» (Յիշատակարան Սկիթի): Այս Գասպարի անունը արձանագրուած է իբր Գուար Կոլտի՝ Ս. Յակոբ Մժմնայ հայրապետի մատրան (Ղալաթիոյ Եկեղեցւոյն) յիշատակարանին մէջ, ինչպէս որ պիտի տեսնենք:

Այս ծերուկը մասնաւոր գուրգուրանքով եւ երախտագիտութեամբ կը յիշատակէ Նալեան իր Նարեկի Մեկնութեան Յիշատակարանին մէջ ոչ միայն իբր դաստիարակ, այլ նաեւ իբր վեհանախ ասպնջական Կոլտի, զոր միսթարած է իր հիւրամեծար յարկին տակ, երբ Կոլտ Պոլիս եկաւ, ճաշակել շտալու համար Վարդապետին՝ պանդխտութեան դառնութիւնները: Յիշեցէք «նաեւ՝ զդաստիարակն եւ զմանկամարզն լուսահոգւոյ Հօր մերոյ (= Կոլտի) Դպրատան, նրբանկատ զհայրապետին ճերունի, զտիրացու Գասպար մահտեսի Թշ աճաճա կոչեցեալն Սեբաստացի, որ բազում երախտիս ունի ի վերայ մեր եւ այլոց աշակերտաց լուսահոգւոյն (= Կոլտի), յորոյ Գուարոն Քիտն Գասպարի լուսնի Եր արդն լուսնի Եր արդն արդն եւ փոխաբերաբար կաթնաուու իմաստից՝ եւ մատակարար առ այլս» (ՄԷԻՆ. Նուրիէ էջ 1136):